

Երևանի պետական համալսարանում գործող  
Բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ)  
իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին  
հասցե՝ ՀՀ 0025 ք. Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1

#### ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոս իրավաբանական գիտությունների թեկնածու

Վահագն Կոլյայի Դալլաբյանի

ԺԲ.00.04 մասնագիտությամբ - «Դատական իրավունք - դատարանական գնումներ, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ Անի Սարմենի Միքայելյանի կողմից  
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
«Ընդդատության հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում»  
վերտառությամբ թեկնածուական ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Ատենախոսական աշխատանքի թեմայի արդիականությունը պայմանավորված է մի քանի գործոնով: Ընդդատությունը քաղաքացիական դատավարությունում դատարանի մատչելիությունը և քաղաքացիական գործերի քննության արդյունավետությունն ապահովող կարևոր ինստիտուտներից է: Ուստի, ընդդատության իրավաբանորեն հիմնավորված, տնտեսապես և կազմակերպական առումով արդյունավետ օրենսդրական կարգավորումը՝ մի կողմից, և այդ նորմերի ճիշտ և միատեսակ մեկնաբանումն ու կիրառումը՝ մյուս կողմից, էական նշանակություն ունեն քաղաքացիական դատավարությունում անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, դատական գործերը ողջամիտ ժամկետներում և առանց ձգձգումների քննելու, դատական ծախսերը նվազեցնելու տեսանկյունից:

2018 թվականին ՀՀ քաղաքացիական դատավարության նոր՝ գործող օրենսգիրքը (այսուհետ՝ ՔԴՕ) մի շարք նոր լուծումներ է նախատեսել նաև ընդդատության ինստիտուտի

հետ կապված: Այս վաստն իր հերթին պահանջում է այդ օրենսդրական փոփոխությունների իմաստավորում՝ այն տեսանկյուններից, թե որքանով են դրանք լուծել մինչ այդ պրակտիկայի առաջադրած խնդիրները, ինչպես պետք է ճիշտ մեկնաբանվեն և կիրառվեն, և անհրաժեշտության դեպքում ինչպիսի հետագա կատարելագործման կարիք են ստեղծում:

Չնայած վերը նշված հանգամանքներին՝ հարկ է նշել, որ քաղաքացիական գործերի ընդդատությանը վերաբերող իրավագիտական հետազոտություններ Հայաստանում բավական սակավ են կատարվել: Պաշտպանության ներկայացված ատենախոսությունն հավակնում է լրացնելու այդ բացը՝ հիմք ծառայելով նաև հետագա հետազոտությունների համար:

Հեղինակը կատարել է քաղաքացիական գործերի ընդդատության համապարփակ և արժեքավոր հետազոտություն: Ուսումնասիրվել է մեծ ծավալի ինչպես տեսական գրականություն, այնպես էլ պրակտիկայի նյութեր՝ դատական ակտեր:

Աշխատանքը կազմված է հետազոտական խնդիրների հետևողական լուծումն ու հետազոտության ավարտունությունն ապահովող պատշաճ կառուցվածքով:

Այսպես, աշխատանքի առաջին գլխի առաջին պարագրաֆում հեղինակը վերլուծում է ընդդատության ինստիտուտի իրավական բնույթն ու նշանակությունը՝ դրանք բխեցնելով արդար դատաբնության իրավունքի տարրերից ու այդ իրավունքի ապահովման չափանիշներից: Այնուհետև, ներկայացնելով և քննարկելով ընդդատության հասկացության շուրջ առկա տեսական մոտեցումները, հեղինակն ի վերջո ներկայացնում է սեփական բնորոշումը:

Աշխատանքի առաջին գլխի երկրորդ պարագրաֆում քննարկվում են ընդդատության դասակարգման վերաբերյալ մոտեցումները:

Աշխատանքի երկրորդ գլխում արդեն առանձին-առանձին վերլուծվում են տարածքային ընդդատության տեսակներն ըստ հեղինակի կողմից ընդունված դասակարգման՝ ընդհանուր տարածքային ընդդատություն, այլընտրանքային ընդդատություն, պայմանագրային ընդդատություն, բացառիկ ընդդատություն, միմյան հետ կապված գործերի ընդդատություն:

Աշխատանքի երրորդ գլուխը նվիրված է ընդդատության կանոնների խախտման հրավական հետևանքների վերլուծությանը:

Հետազոտության արդյունքներով հեղինակը ներկայացրել է մի շարք արժեքավոր եզրահանգումներ և առաջարկներ ենթակայության և ընդդատության ինստիտուտների օրենսդրական տարանջատման, այլընտրանքային ընդդատության կանոնների հստակեցման, պայմանագրային ընդդատության կանոնների ճիշտ մեկնաբանման և կիրառման, միմյանց հետ կապված գործերի ընդդատության կանոնների կատարելագործման, ընդդատության կանոնների խախտման հետևանքների և այլ հարցերի վերաբերյալ:

Ատենախոսության ուսումնասիրության արդյունքում կարող ենք եզրակացնել, որ հեղինակը կատարել է ավարտուն աշխատանք, կիրառելով ճիշտ մեթոդաբանություն, օգտագործելով տեսական և պրակտիկ մեծ ծավալի նյութեր: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հրապարակած թվով յոթ գիտական հոդվածներում: Սեղմագիրը արտացոլում է աշխատանքի հիմնական դրույթները և համապատասխանում է ներկայացված աշխատանքին:

Այնուամենայնիվ, ատենախոսությունը պարունակում է առանձին՝ մեր կարծիքով վիճելի եզրահանգումներ, որոնց վրա հարկ ենք համարում հրավիրել հեղինակի ուշադրությունը: Այսպես՝

1. Պաշտպանության ներկայացվող 2-րդ դրույթում հեղինակն առաջարկում է փոփոխել ՔԴՕ 24-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բացառիկ տարածքային ընդդատության կանոնը՝ մասնավորապես սահմանելով, որ *«Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի և գույքային այլ իրավունքների վերաբերյալ հայցերը ներկայացվում են անշարժ գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան»*<sup>1</sup>: Կարծում ենք, որ հեղինակի առաջարկած խմբագրությունը կարող է բացառիկ ընդդատության տվյալ կանոնի գործողության շրջանակի անորոշությունն առաջացնել: Այսպես, եթե ՔԴՕ 24-րդ հոդվածի 1-ին մասը հստակ սահմանում է այդ շրջանակը (անշարժ գույքի նկատմամբ

<sup>1</sup> Մեջբերված է հեղինակի առաջարկած խմբագրության միայն առաջին հատվածը, որին առնչվում է սույն նկատառումը:

սեփականության իրավունքի ճանաչման, վիճակագրի և նեգատոր հայցեր), ապա հեղինակի առաջարկած՝ «անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի և գույքային այլ իրավունքների վերաբերյալ՝ հայցեր» ձևակերպումն անորոշ է: Առավել լայն մեկնաբանման դեպքում այդ շրջանակում կարող են ներառվել, օրինակ, անշարժ գույքի վարձակալության պայմանագրից բխող՝ պայմանագրի ժամկետի, վարձավճարի չափի և նմանատիպ այլ վեճեր: Նման անորոշությունը, ինքնին խնդրահարույց լինելով, կարող է հանգեցնել նաև բացառիկ ընդդատության գործողության ոլորտ անհարկի լայն շրջանակի վեճեր ներառելուն, ինչն արդարացված չի լինի ընդդատության ինստիտուտի նպատակներով:

2. Պաշտպանության ներկայացվող 3-րդ դրույթում (ներկայացված է նաև Եզրակացությունների 11-րդ կետում) հեղինակն առաջարկում է ՔԴՕ-ում սահմանել, որ միաժամանակ բացառիկ և այլընտրանքային ընդդատություն ունեցող պահանջներով հայցը պետք է ներկայացվի այլընտրանքային ընդդատության կանոններով սահմանված առաջին ատյանի դատարան: Առաջարկը հիմնավորվում է նրանով, որ այլընտրանքային ընդդատությունն իր բնույթով բարելավող, խրախուսող բնույթի նորմեր է պարունակում, իսկ բացառիկ ընդդատությունը, ընդհակառակը, սահմանափակող բնույթի, հետևաբար այլընտրանքային և բացառիկ ընդդատության կանոնների միջև ընտրությունը պետք է կատարվի այլընտրանքային ընդդատության կանոններին նախապատվություն տալով:

Մինչդեռ, ընդհանրապես ընդդատության ինստիտուտի և մասնավորապես բացառիկ ընդդատության կանոնների նպատակներից է դատավարությունն արդյունավետ և ողջամիտ ժամկետներում կազմակերպելը, դատական ծախսերը նվազեցնելը: Դրանով իսկ բացառիկ ընդդատության կանոնները պաշտպանում են ոչ միայն հայցվորի, այլ նաև գործին մասնակցող այլ անձանց օրինական շահերը: Իսկ ահա այլընտրանքային ընդդատության կանոնները թեև բարելավող բնույթի են, սակայն միայն հայցվորի համար, քանի որ նրան է տրվում մի քանի հնարավոր դատարանների միջև ընտրելու հնարավորությունը: Ըստ այդմ, վիճելի է թվում միայն հայցվորի համար բարենպաստ նորմին առավելություն տալն այն

<sup>2</sup> Ընդգծումը մերն է:

նորմի նկատմամբ, որն ուղղված է գործին մասնակցող բոլոր անձանց օրինական շահերի պաշտպանությանը:

3. Պաշտպանության ներկայացվող 6-րդ դրույթում հեղինակն առաջարկում է սահմանել հայցադիմումի վերահասցեագրման կանոն, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով: Կարծում ենք՝ հայցադիմումն ընդհանուր իրավասության դատարանից վարչական դատարան վերահասցեագրելու դեպքերի զգալի մասում խնդիր կարող է առաջանալ հայցադիմումի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված պայմանների անհամապատասխանության առումով, մասնավորապես՝ վարչական դատավարությունում նախատեսված հայցատեսակների մասով: Նման խնդիրները կարող են կասկածի տակ դնել վերահասցեագրման ինստիտուտի արդյունավետությունը:

4. Աշխատանքի 72-74 էջերում հեղինակը քննարկում է այն հարցը, թե արդյոք պետք է թույլատրելի համարվի կնքել պայմանագրային ընդդատության մասին համաձայնություն վեճը ծագելուց առաջ: Արդյունքում հեղինակը եզրահանգում է (դա արտացոլված է նաև Եզրակացությունների 6-րդ կետում), որ պայմանագրային ընդդատության մասին համաձայնություն կողմերը կարող են կնքել միայն վեճը ծագելուց հետո<sup>3</sup>՝ մինչև դատարան դիմելը: Այս առաջարկն ըստ երույթին հիմնավորվում է առանձին քաղաքացիաիրավական պայմանագրերում տնտեսապես առավել անբարենպաստ հանգամանքներում գտնվող կողմի (սպառողներ, ֆինանսական կազմակերպությունների հաճախորդներ և այլն) պաշտպանության նկատառումներով: Մինչդեռ, այդպիսի սուբյեկտներին կարելի է պաշտպանել ոչ թե ամբողջ կանոնը փոխելու, այլ առանձին բացառություններ սահմանելու միջոցով: Իսկ հեղինակի առաջարկված տարբերակով անհարկի նեղացվում է պայմանագրային ընդդատության կիրառման ոլորտը նաև, օրինակ, երկու ֆիզիկական անձանց միջև կնքված փոխառության պայմանագրից կամ երկու առևտրային կազմակերպությունների միջև կապալի պայմանագրից բխող վեճերի լուծման նկատմամբ:

<sup>3</sup> Ընդգծումը մերն է:

Հարկ է նշել, սակայն, որ վերը նշված նկատառումները բանավիճային բնույթի են և չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Անի Սարմենի Միքայելյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման «Ընդդատության հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 08.08.1997թ.-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» կետ 7-ի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.04 մասնագիտությամբ - «Դատական իրավունք - դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ըննդիմախոս՝

Վ. Կ. Դալլաքյան

Ի.գ.թ., դոցենտ

22.06.2021թ.

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու Վահագն Կոլյայի Դալլաքյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ*

ԵՊՀ իրավագիտության ամբիոնի ղեկավարի տեղակալի պրոֆեսոր՝



Հ.Ս. Խաչիկյան